ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Վ. Պ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանն իր ստեղծագործություններում մեծ տեղ է տվել հայ կնոջ կյանքի, իրավական ու ընտանեկան վիճակի գեղարվեստական-հոգեբանական պատկերմանը։

Տակավին երիտասարդ բանաստեղծը կնոջ հանդեպ հարգանքի և սիրո խոսքով հակադրվել է իշխող արհամարհական ու վիրավորական վերաբերմունքին, որը «օրինականացվել» էր դարերի ընթացքում, վերածվել ինչ-որ «բարոյական» նորմի։ Դեռևս 1894 թ. հրատարակված «Բորչալվում» ճանապարհորդական նկատողություններում Թումանյանը գրել է. «Ժողովրդի բարոյական ու տնտեսական կյանքը ճանաչելու համար մի գեղեցիկ միջոց, մի հեշտ չափ կա—այդ կինն է։ Կնոջ վիճակը հայտնում, ցույց է տալիս, ինչպես անհատի, այնպես և հասարակության աշխարհահայեցողության սահմանը, զարգացման աստիճանը։ Բորչալվում կինը դեռ դատապարտված է ավանդական արհամարհանքին, իբրև «առաջին մեղքի պատճառը», «դժողքի դուռը» նզովված բոլոր սրբերից ու սրբություններից... Դեռ այնտեղ բարոյապես սահմանված ընդհանուր հարգանք չկա դեպի կինը...»[1]։

Մեծ հումանիստն ու հայրենասերը ձգտել է ոչ միայն բազմակողմանիորեն ներկայացնել հայ կնոջ ծանր ու նվաստացուցիչ վիճակը, այլև բացահայտել դրա պատճառները և արվեստի ու հրապարակախոսության միջոցով օգնել նրա իրավական ու բարոյական գրության բարելավմանը։ 1899 թ. իշխանուհի Մարիամ Թումանյանին հղած իր նամակում նա գրել է. «Ինձ համար մի քիչ բան գրեք Ձեր այն հիշողություններից, որ ինձ համար այնքան թանկ են։ Դուցե թե հոգեբանական անալիզներ անեք, որ այնքան սիրում եք Դուք. այդ արդեն շատ կուրախացնի ինձ» (5, էջ 148)։

1901 թ. նույն Մ. Թումանյանին հղած մի այլ նամակում բանաստեղծը գրում է. «Որքան շատ կանանց եմ հանդիպում, հետևեր խոտում, ճանաչում, այնքան ավելի եմ կարոտում մեր հոգեբանական-փիլիսոփայական-բանաստեղծական զրույցները» (5, էջ 185)։ Հ. Թումանյանը շատ բարձր էր գնահատում Մ. Մ. Թումանյանին և գործակցում էր նրա հետ՝ ինչպես լուսավորության, այնպես էլ արվեստի զարգացման բնագավառում։ Նա նշում էր, որ Մարիամ Թումանյանը «զարմանալի կին է։ Ափսոս նրան լավ չեն ճանաչում սոհասարակ։ է՞հ, վերջում կճանաչեն. միշտ վերջումը...» (5, էջ 214)։ Այսպես. Թումանյանը համառորեն փորձում էր ճանաչել և՛ Բորչալվի գեղջկուհուն, և՛ բարձր մտավորական Մարիամ Մարկովնային, ինչպես և հայ աղջկան Մարոյից ու Անուշից մինչև «անիծած» հարսը, սկեսուրը, խորթ մայրը, այրին, տիկին Նատոն ու Թմկա տիրուհին։

Մեզ է հասել 1914 թ. փետրվարի 27-ին հայ գրողների ընկերության կազմակերպած երեկույթում «Կնոջ ստեղծագործական կարողությունների մասին» թեմայով Հ. Թումանյանի կարդացած զեկուցման շատ հակիրճ մի շարադրանք. «Ազգերի գրականությունների պատմությունը ցույց է տալիս,— ասել է Թումանյանը,— որ ամեն սնգամ, երբ կինը ունեցել է ազատ վիճակ և նպաստավոր պայմաններ, գրական ասպարեզ հայտնվել է լուրջ ստեղծագործություններով։ [Ապա նա] օրինակներ բերեց Հին Հունաստանի կյանքից, ուր ադատ

---

[1] *Հովհաննես Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1959, էջ 76 (այսուհետև հղումները կտանք տողամիջում, նշելով համապատասխան հատորը և էջը)։*

ու անազատ կանայք ապրում էին իրար կողքի, և ազատ կանանց շրջանից էր, որ դուրս եկան Սաֆոն, Ասպազիան ու իր նմանները։ Հիշեց ճապոնական գրականությունից Հեյնանի ու Եդոյի շրջանները, երբ մի շրջանում ազատ ճապոնուհին լսել [տվել] է գրական գլուխգործոցներ, իսկ մյուս շրջանում, արդեն անազատ ճապոնուհին շքացել է գրական ասպարեզից... Ֆրանսիական հեղափոխությունը, որ նոր թափ է տալիս կանանց շարժմանը և առաջ են գալիս Մ-me Ստալ, Ժորժ Զանդ և ուրիշ շատ նշանավոր կանայք, և այսօր արդեն դժվար է հաշվել գրական ասպարեզում հռչակ հանած կանանց անունները։ Իսկ հայ կնոջը, հիշատակեց հայ ժողովրդի նորանցյալ ծանր վիճակը և հայ կնոջ ճնշված դրությունը մասնավորապես» (4, էջ 461)։

Հ. Թումանյանը տեսնում է այն օրինաչափությունը, որը հասարակության առաջընթացին զուգընթաց հասցնելու է կանանց ազատագրությանը։ Սակայն այդ պրոցեսը կարելի է և պետք է արագացնել, որին և կնպաստի լուսավորությունը և մասնավորապես գեղարվեստական գրականությունը։ Ահա թե ինչու Թումանյանն իր երկերում մեծ ուշադրություն է նվիրել հայ կնոջը, եղել է նրա իղձերի ու ձգտումների, ցավերի ու հոգսերի, հույսերի և հույզերի արտահայտիչն ու մեկնարանը, թափանցել նրա ներքնաշխարհը, բացահայտել սրտի և հոգու գաղտնարանները, գովերգել նրա ընդունակություններն ու աշխատասիրությունը, առաքինություններն ու զգացմունքները։

Բանաստեղծը խորն ու ծավալուն ընդգրկումով էր զգում ու ներկայացնում սարդուն, նրա սերն ու ատելությունը, չարն ու բարին։ Ինչ որ նա գրել է՝ այդ եղել է իր ազնիվ հոգու թրթիռների արտահայտություն, բայց նրա ամբարված ասելիքի միայն մի մասն է գրին հանձնվել, թեպետ այդ մասն էլ հանճարեղ բանաստեղծի խորաթափանց մտքի և երևակայության վառ արտահայտությունն է.

Ես հազար աչքով բաներ եմ տեսնում,
Որ թաքնված են լռության ետև,
Հազար ականջով ձայներ եմ լսում,
Որ դեռ որտերում շշուկ են թեթև (1, էջ 467)։

Թումանյանն ստեղծել է անցյալի և իր ժամանակի հայ կնոջ դիմանկարները, որոնք անկրկնելի են իրենց ռեալականությամբ, կոնկրետ են իրենց անհատականությամբ և ընդհանրացված՝ իսկական արվեստի ուժով։ Նա խորն ու բազմակողմանիորեն ուսումնասիրում և բացահայտում է այլազան հոգեվիճակների ռեալ հիմքերը, անալիզի ու սինթեզի միջոցով վեր է հանում դրանց էվոլյուցիան՝ մտքերի ու զգացմունքների խանձարուրից կյանքի կոչելով հուզիչ, հոգեբանական հզոր ուժով օժտված կերպարներ։

Բանաստեղծական խոսքը հսկայական ներգործական ուժ ունի, գյոթեի արտահայտությամբ դա այն «շեփորող հարմոնիան», բառային բարեհնչուն ալիքն է, որը մեծ բարոյական ու հոգեբանական ազդեցություն է գործում ընթերցողի վրա։ Հայ մեծագույն բանաստեղծի յուրաքանչյուր ստեղծագործության մեջ մեկը մյուսի հետևից մեր առջև բարձրանում են կարիքի ու հոգսերի ծանրության տակ ճնշված, բայց աշխատասեր ու կամային գեղջկուհին, հոգատար մայրը, մինչ մոռացում ու մահ հավատարիմ ու սիրող աղջիկը, դժբախտ ու ստրկացած հարսը, բռնության, անտարբերության ու արհամարհանքի հանդեպ ծառացող ու տոկացող հայուհին, չարի դեմ ընդվզող ազատասեր կինը և դրանց հետ մեկտեղ՝ անհոգի ու դաժան խորթ մայրը, քաղքենին, վառամուլն ու դավաճանը։

Թումանյանական այս կերպարները հսկայական դաստիարակչական ազդեցություն են ունեցել և ունեն, դրանք ոչ միայն բացահայտում են լավն ու վատը, այլև ներթափանցում ընթերցողի սիրտն ու հոգին, հուզում, նրան տանելով Թումանյանի գաղափարական աշխարհը՝ ստիպելով վերապրել, զգալ,

հասկանալ և վերանայել սեփական պատկերացումներն ու վարքագիծը կնոջ նկատմամբ։

Թումանյանը խորապես ապրում էր իր հերոսների հոգևոր կյանքով։ Այլ կերպ նա չէր կարողանա ստեղծել հոգեհույզ կեղպարներ ու կենդանի պատկերներ. «Բանաստեղծությունը կամ բանաստեղծին կարելի է գտնել զգացումով, ըմբռնումով, հոտառությամբ։ Ապա, երբ արդեն գտնված է բանաստեղծը, նոր միայն գործադրել մեթոդներ՝ նրան վերլուծելու։ Այս կամ այն մեթոդով չի կարելի գտնել բանաստեղծությունը նրա գրվածքների մեջ, ինչպես չի կարելի անդամահատության այսինչ կամ այնինչ եղանակով անդամահատելով գտնել գեղեցկուհու հրապուրանքը» (6, էջ 392)։

Այդպես է վարվում Թումանյանը՝ ամեն դեպքում ընդգծելով կյանքի ուշագրավ մի դրվագը, խորամուխ դիտողականությամբ ներկայացնելով այն՝ հնարավորություն ստեղծելով վերլուծելու, հասկանալու և եզրակացություններ անելու և ընթանալու դեպի համամարդկայինը, մասնավորից դեպի ընդհանուրը։ Բայց նա այդ անում է միմիայն արվեստի միջոցներով, առանց փիլիսոփայական «զգեստավորման»։

Թումանյանը կանանց հասարակական ու ընտանեկան կյանքի հանգամանքներով պայմանավորված հոգեվիճակների ուսումնասիրությունն սկսել է բացառիկ կոնկրետությամբ, դրանց և՛ ընդհանրության, և՛ ծավալականության ոլորտներում։

Արտասովոր հուզականությամբ է կերպարանավորված դեռատի հայ աղջկա՝ Մարոյի ողբերգական վիճակը։ Սկզբում երեխան չէր հասկանում, թե ինչ է կատարվել իր հետ.

—Լավն է, ասում էր, Կարոն,
Բերում է ինձ ամեն օր
Կանփետ, շամիչ ու խնձոր (2, էջ 5)։

Այստեղ ճշմարիտ ձևով արտահայտված է աղջնակի հոգեբանության անմիջականության մի օրինակ, սկզբնական մանկական սիրով կապվածության հիմքը։ Դրությունը փոխվում է, երբ պսակում են Մարոյին և տանում Կարոյի տունը, որտեղ խորթ մթնոլորտն ստեղծում է նոր հոգեվիճակ։ Մարոն չի դիմանում դժխեմ կյանքին և ինքնասպան է լինում։ Անգամ այս ողբերգական վախճանը չկարողացավ հաղթահարել ադաթի ու նախապաշարմունքի ուժը... Մարոյի դին պապի կողքին չդրին։

Հայ աղջիկները մեծանում էին, հասունանում, սակայն էլի չէին դառնում իրենց բախտի տնօրինողը։ Անուշը իրավունք չուներ ամուսնանալ իր սիրածի՝ Սարոյի հետ, որովհետև կոխի ժամանակ տաքացած Սարոն գետնել էր Մոսին։ Եղբայրն ու հայրը ոչ միայն գատապարտում էին «օրենքը» ոտնահարող, ապա և Անուշին փախցնող Սարոյին, այլև օրինական համարում արյան վրեժի ավանդույթը, Սարոյի սպանությունը։

Թումանյանը մեկ այլ հերոսի՝ տաղաբախտ Թամարի մասին լեգենդի մրշակմամբ պաշտպան է կանգնում ազնիվ զգացմունքի ապատության։ Թամարի ջահել սիրահարը, սրտից հանած ահն ու վախը, ծովն է մտնում գիշերով՝ կրդղում հանդիպելու իր սիրած աղջկա հետ... Բայց համագյուղացի երիտասարդները խանդում են, չեն հանդուրժում «օտար» երիտասարդի համարձակությունը...

Աղջի՜կ խլի նա մեր ձեռից...
Ինչի՞ տեղ է մեզ դնում։

Ձահելները հանդցնում են Թամարի վառած կրակը, որպեսզի երիտասարդը կորցնի կղզի հասնելու ճանապարհը, ծովում խեղդվի, որպեսզի խեղդվի նաև Թամարի նվիրական սերը։

Թումանյանը «Ախթամարը» գրել է 1891 թ., և ինչպես երևում է, նա այնպիսի խոր ապրումներ է ունեցել, որ անգամ 24 տարի հետո 1915 թ. նորից անդրադարձել է այդ տխուր պատմությանը և գրել «Ախթամարի կղզում» նոր տաղավորը։

Սրտիս խորքերին,
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լսո՜ւմ.—
«Թամար... ա՜խ, Թամար...
Սերը որ կորավ,
Սիրտը որ մնավ,
Արցունքն է մնում» (1, էջ 177)։

Աղջկա իրավազրկությունն արտահայտվում է անգամ թագավորական ապարանքներում. «Փարվանայի» արքան ուզում էր իր դստեր ամուսին դարձնել միայն այն կտրիճին, որը մյուսներին կգերազանցեր ուժով։ Աղջիկը, սակայն, սիրո ուրիշ չափանիշ ունի և հանդգնում է արքային ասել՝

Թույն, հայրիկ, տկար լավին
Հաղթի մի վես տմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սրտի... (1, էջ 294)։

Աղջիկն ուզում է տղամարդու ոչ թե հարստությունը կամ անգամ հերոսությունը, այլ սրտի սերը՝ «անշեջ հուրը սրբազան»։

Թումանյանը, ցույց տալով կանացի սիրո ռոմանտիկ էությունն ու հերոսականությունը, իր երկերում ընդգծում է նաև նրա հավատարմությունը և ուժը, բայց նաև անզորությունը, քանի որ աղջիկը իրավունք չունի անգամ իր սերն առաջարկելու երիտասարդին։ Սերը կրկնակի ծանր ու խորին տառապանք է առաջին հերթին և երբեմն միայն աղջկա համար։

Աղջկա և կնոջ զգացմունքը Թումանյանը այնպես չի ներկայացնում, ինչպես քնարերգության շատ վարպետներ։ Սիրո զգացմունքը, դրա խորությունն ու տառապանքը, կասկածն ու հիասթափությունը մեկուսացած ապրումներ չեն, դրանք անմիջականորեն կապված են միջավայրի բարդ ու խճողված փոխհարաբերությունների հետ։ Աղջկա և երիտասարդի հոգեկան կապերը հանգուցված են հասարակության իշխող բարքերի ու ավանդույթների, ռեալ իրավիճակների հետ և կարծես այնտեղ չկա «մաքուր» քնարերգություն։ Գուցե հենց այդ է պատճառը, որ բանաստեղծի երկերում կնոջ կերպարը ավելի կենդանի է, ամբողջական ու հոգեհարազատ ընթերցողին։

Ինչպես նկատել է Դերենիկ Դեմիրճյանը, Հ. Թումանյանը «իր գավառով ներկայացրեց ողջ հայ ժողովուրդը» (8, էջ 144), ինչպես և իր կանացի կերպարներով՝ հայ կնոջ ամբողջական տիպարը։

Բացառիկ ուժով է ներկայացրել Թումանյանը հայ աղջկա մաքուր ու աղնիվ սերը, ստեղծելով մի շարք վառ կերպարներ, որոնցից առավել ակնառու է Անուշը՝ համանուն պոեմում, որտեղ հերոսուհին ներկայացված է գյուղական աղջկա պարզ հոգեբանությամբ։ Անհունորեն խորն ու նվիրական է Անուշի սերը, բայց և պարուրված թախիծով ու կասկածանքով։

Թումանյանը կարծես աննկատելիորեն վեր է հանում կանացի սիրո դերն ու նշանակությունը տղամարդու անձնական աշխարհում։ Այդ շատ վառ, հուզիչ ու համոզիչ արտահայտություն է գտել պոեմի թեկուզ մի փոքրիկ հատվածում, որտեղ Սարոն պատկերում է Անուշի սիրո բախտորոշ դերն իր կյանքում.

—Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում,

էն, որ ռանչերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում...
էն, որ գիշերով շընչու եմ փընչում,
էն ո՞ւմ եմ կանչում... (2, էջ 53)։

Այս հատվածը մտքերի ու զգացմունքների մի հարուստ գամմա է, որն ի մի է բերել այն բոլորը, ինչ ծնել է աղջկա սերը Սարոյի ներքնաշխարհում՝ խաղեր հյուսելու պոետական տրամադրություն, երգի ու շնչի նվագի միջոցով սիրո կանչ, մենակ ու տխուր մտորումներ, հառաչանք ու արբեցում։ Եվ իսկապես, չէ՞ որ սերը ներշնչանքի ուժով ստեղծում է երգ ու երաժշտություն, պոետական անուրջներ, դրամա ու ողբերգություն։ Թումանյանն այդ ընդհանրացումը թողել է ընթերցողի դատողությանն ու երևակայությանը, դրա համար ստեղծելով միայն հոգեբանական բարեբեր ենթահող։ Անուշը չէր կարող դիմանալ իր միջավայրի բիրտ բարքերին ու հասարակական կարծիքի հեղձուցիչ մթնոլորտին և մանավանդ Սարոյի սպանության ողբերգությանը։ Մի անզուգական վերջերգ է սա, որտեղ ամփոփված են խելագարված աղջկա կյանքի վերջին հոգեհույզ պահերը և այն ապրումները, որոնք համարժեք երաժշտական հնչեղության հասան Ա. Տիգրանյանի օպերայում, ստանալով հավերժականության ուժ։

Ռեալիստական վառ գույներով է ներկայացվում նաև հայ նորահարսի իրավազուրկ վիճակը։ «Անիծած հարսը» նահապետական ընտանիքի ճնշված անդամն է, որը պետք է հարմարվի այլ ընտանիքի խստաբարո ավանդույթներին, զրկված անգամ խոսելու և ուրախանալու իրավունքից։ Եվ նա հնազանդ է բարքերին, դրանք համարում է օրինական...

Նրա քերնից՝ կեսուր-կեսար
Չէին լսել մի շունչ, մի բառ,
Չէին տեսել շուրթը մի օր...
Էսպես խոնարհ ու հարգևոր (1, էջ 282)։

Եվ հանկարծ կատարվում է «անսպասելին», խախտվում է ադաթը, երբ հարսը՝

Մի օր մենակ օդում նստած,
Իր ճոխ մազերն արձակ թափած,
Ազատ, անփույթ սանրում, հյուսում,
Հետն էլ ձենով երգ էր ասում։
«Աշխարհքը բանտ,
Մեջը անբախտ
Ես մի գերի անխընդում...»

Չէ՞ որ նույնիսկ օդայում մենակ նստած՝ հարսը պետք է իրեն զսպված պահեր, չէր կարելի մարդերն «արձակ» թափել և «անփույթ սանրել ու հյուսել», առավել ևս «ձենով» երգ ասել, դժգոհել իր վիճակից՝ երանի տալով ծտին, որ ազատ, անկախ

Ծըլվըլում է թրթռում,
Բռլում՝ սիրած
Ընկերն առած,
ազա՞տ, կանա՞չ դաշտերում։

Այս բոլորը բավական էր, որ հարսի ձայնը լսող սկեսրոջ զարմանքն ու զայրույթը կատաղության հասներ։ Սկեսուրը ներս է մտնում, և վախեցած ու շփոթված հարսը կորցնում է խոսքի ունակությունն ու թոթովում՝ «Հո՛, պո՛, պո՛ պո՛» («կանչեց խեղճը»)։ Սկեսուրը գործի է դնում կանացի դաժանության միջոցներից մեկը՝ անեծքը. «Հոպոպ դառնաս, անամոթ հարս»։

Ուշագրավն այն է, որ Հարսը, լիովին հասկանալով հանդերձ իր վիճակի ողբերգականությունը, օրինական է համարում սեփական «քայլերի» «անթույլատրելի» լինելը և անգամ մեղանչում է, դատապարտում իրեն. «Գետին պատռի՛, մտնեմ մեջը»։

Այրի գեղջկուհու վիճակը բնութագրող մի ոտանավորում խոսվում է ոչ միայն նրա հոգսերի, այլև կամքի ու աշխատասիրության մասին։ Գամված իր օջախին, այրին իր ճախարակով ու անդուլ աշխատանքով պահում է ու պահպանում ընտանիքը՝ ազգի կենդանի բջիջը։ Հայ կինը, այրին, չի լքում իր երեխաներին, ապրում է միայն նրանց համար, տանջվում նրանց ցավերով, ինքն իրեն կոչելով աշխատանքի...

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Նստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Որբերին հեր, ճախարակ։
Աղքատ օրով ու լացով
Որբեր պահեմ մանածով (1, էջ 154)։

Կանացի մի այլ կերպար է Անուշի մայրը, որը երիտասարդ տարիքում իր հոգեբանությամբ, երևի, նույնն էր, ինչ իր դուստրը, սակայն այլ դերում, երբ կին է, դարձել է մայր՝ նա շատ զգույշ է, կասկածամիտ ու խստապահանջ, կորցրած երիտասարդի աշխարհըմբռնողությունը։ Բայց լինելով ցավակից մայր, նա միանգամայն այլ վերաբերմունք ունի Անուշի վիճակի նկատմամբ, քան հայրն ու եղբայրը։

Հ. Թումանյանի երկերում տեղ են գտել կյանքի փորձով իմաստուն դարձած կանայք։ Ահա Գիքորի ու Քաջաղ Արտեմի բարեհոգի մայրերը։ Նրանք փորձում են իրենց թույլ հովանավորության տակ վերցնել դժբախտ երեխաներին, թեև էական փոփոխություն չեն կարողանում կատարել նրանց բախտում։

Ինքնատիպ ու խորը, լայնախոհ և հուզիչ է Հ. Թումանյանի սերը մոր նկատմամբ, կոնկրետ արտահայտչական միջոցներով ընդհանրացած ու համամարդկային, բայց միշտ հայ մոր նկատմամբ ունեցած սիրով.

Բարի իրիկուն, վշտալի մայրեր...
Իմ մայրերն եք դուք.
Իմ մայրն է, ձեզ պես,
Դուք էլ նրա պես
Ճրագի առջև,
Կրակի առջև,
Դռան առաջին,
Կամ լուսամուտի,
Անկողնում անքուն
Պատույտ եք գալիս,
Ճամփա եք պահում.
Երբ պետք է ծագի,
Երբ պետք է մթնի,
. . . . .
Մի հոգս ունենք լոկ՝
Ե՞րբ պիտի արդյոք
Էս կյանքը անցնի,
Տանջանքն անցնի։
Ի՛նչ ցեղ էլ լինենք,
Ի՛նչ տեղ էլ լինենք
. . . . .
Իմ մայրերն եք դուք (1, էջ 524)։

Այստեղ հնչում է մեծ բանաստեղծ-ինտերնացիոնալիստի սիրո անօրինակ խոսքը, որը բազմանշանակ ու կարևոր էր 1914 թ. առաջին աշխարհամարտի օրերին, երբ ժողովուրդները «մի հոգս ունեն լոկ...—Ե՞րբ պետք է արդյոք... էս կյանքը անցնի, տանջանքը անցնի»։

Սիրող մոր զգացմունքները այնքան հայտնի են, որ գուցե հարկ չկար դրանց շատ տեղ տալ, բայց Թումանյանն ուզում է մարդասիրություն զարթնեցնել նաև այնտեղ, որտեղ այն չկա, կամ պակասում է... Պետք էր միաժամանակ համոզչականությամբ դատապարտել խորթ մայրերի ու հայրերի անուշադիր, երբեմն վատ ու դաժան վերաբերմունքը երեխաների նկատմամբ և այդ անել տպավորիչ ու հուզական ճանապարհով, ստեղծելով ոչ միայն կարեկցու-

թյան զգացմունք, այլև անմիջական գործողության դիմելու և՛ ցանկություն, և՛ պատրաստակամություն։

Կանացի բացասական կերպարները Թումանյանի երկերում համեմատաբար քիչ են և ներկայացված կարծես հոգեբանորեն պակաս հավաստի ձևով։ Մասնավորապես չափազանցված ու ցցուն է դարձված խորթ մոր դաժանությունը, որը հասարակական շարիք է, երբեմն դուրս է գալիս ռեալ իրականության շրջանակներից։ Սակայն այդ հիպերբոլիկ ու ցցուն գրվագները չեն խանգարում երկի գեղարվեստական ճշմարտությանն ու հոգեբանական հավաստիությանը։

Թումանյանի տեսադաշտից դուրս չեն մնացել կանացի բացասական կերպարները, որոնցում ներկայացված են քաղքենիական գծերը, շահամոլությունն ու փառասիրությունը և այլ արատներ։ Դրանք երբեմն հասցնում են ալլասերման և անգամ դավաճանության։

Ուշագրավ է «Թմկաբերդի առումը» բազմապլան երկը, որտեղ ամբողջ խորությամբ ներկայացվում է կնոջ գեղեցկության և հմայքի մեծ ուժը։ Դրանք երբեմն բացասական գործոն են դառնում ընտանեկան ու հասարակական կյանքում։ Այդ պոեմը ստեղծելու համար Թումանյանը 1901 թ. գնում է Ջավախք։ Այդ մասին իշխանուհի Թումանյանին նա գրել է. «Ուզում եմ Թմկաբերը գնալ—երևի հիշում եք Թմկաբերդի լեգենդան—այն կինը, որ ուզեց շահի թագուհին դառնալ և այլն» (5, էջ 189)։ 1905 թ. տպագրվում է այդ լեգենդի գրական մշակումը, որը հիմք է դառնում նաև երաժշտական ստեղծագործության՝ «Ալմաստ» օպերայի համար։

Աշուղը շահի մոտ գովերգում է Թմկա տիրուհուն, պատմում ամուսնու վրա նրա ունեցած ազդեցության մասին և խորհուրդ տալիս տիրուհուն գայթակղելու միջոցով հաղթել իշխանին.

էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թե աշուղն էլ ունենար,
առանց զենքի,
առանց զորքի
Շահերի դեմ կգնար։
. . . . .

Էս է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նրա սիրովն է հարբած էն հսկան,
. . . . . .
Նրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առյուծի նման։
Թե տիրես, մեծ շահ, դու նրա սրտին,
Թաթուլն էլ անզոր կընկնի ոտիդ տակ...

Այստեղ, ինչպես և մյուս քննվող երկերում, բացառիկ ճշգրտությամբ բացահայտված են զգացմունքների բարդ ելևէջները։ Այսպես, Թմկա տիրուհին, բռնված լինելով աշխարհակալ Նադիր շահի թագուհին դառնալու անսանձ կրքով, դավաճանում է ոչ միայն իր ամուսնուն, այլև հայրենիքին։ Սակայն տեսնելով իր խաբված լինելը, վիրավորված կանացի ինքնասիրությամբ, կատաղի կրքով խարազանում է ստոր բռնակալին՝ նրա երեսին շպրտելով իր ցասկոտ մեղադրանքը՝ շեշտելով Թաթուլի բարեմասնությունները՝

—Քաջ էր ու սիրուն բեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չի առել,
Չի եղել կյանքում երբեք խարերա...

Թումանյանի երկերում որոշ տեղ են գտել կնոջ նկատմամբ տածած նրա անձնական սիրո գրվագները՝ սկսած մանկապատանեկան ժամանակաշրջանից մինչև հասունության տարիները։

1913 թ. նա նորից է անդրադառնում սիրո թեմային, փառաբանում է սիրո ուժն ու հավերժականությունը. «Աղջկա սիրտը» (Արևելյան ավանդություն) ստեղծագործության մեջ նա գրել է. «Բայց սիրո համար վերջ ու մահ չրկան» (1, էջ 339)։

Ինչպես տեսանք, աղջկա-կնոջ ազատության, նրանց նկատմամբ սիրո ու հարգանքի պրոբլեմը մշտապես եղել է Թումանյանի ստեղծագործության առանցքային ու կենտրոնական ուղենիշներից մեկը, կապված կյանքի ընդհանուր հարցերի հետ, հաճախ նաև քաղաքական դրության հետ։ Իր դստերը նվիրած ոտանավորում անգամ հնչում է պոետ-քաղաքացու խոսքը.

Ա՜խ, Արփիկ ջան, որ արփի ես
Բացվում հոգուս երկրնքում,
Դիտե՞ս քանի արփի բացվեց
Քեզնից առաջ էս կյանքում...
Քո լույս ու կույս շաղով, շողով
Հարս շոդաթված իմ սրտում
Անքուն վախով, թաքուն դողով
Էս սև ամպն է պրտրտվում...
Հոլա՜, ժպտա՜, հուր, բոց տեղա
Որևնուաքի մութի դեմ (1, էջ 527)։

Ուշադրավ է այն հանգամանքը, որ անգամ աշխարհամարտի օրերին, հոգնատանջ իր ժողովրդի ցավերով, բանաստեղծը չի մոռանում կանանց ազատագրման հարցում իր ասելիքը։

1915 թ., երբ պոետ-քաղաքացին ամբողջապես համակված էր հայ ժողովրդի ողբերգական օրերին օգտակար լինելու դաղափարով, հրապարակվեց նրա «Թանկ մարդու հիշատակին» հոդվածը, որտեղ կարդում ենք. «Ազատալի դաղթականությունը, որ Տաճկաստանից գետացած եկավ ու ծովացավ էջմիածնի շուրջը, շատ բաների հետ հանդես բերավ և մի երևույթ, թե ինչ խելադար անձնվիրության է ընդունակ հայ կինը—հայ աղջիկը։ Էջմիածնում գրեթե ամեն գործի մեջ ամենից առաջ հարկավոր էր սիրտ, սրտալի վերաբերմունք, բայց անհրաժեշտ էր մանավանդ Մանուկների ասպատարանում, որ միշտ Որբանոց կոչվեց։

Ահա էստեղ էր, մի քանի հազար կեղտոտ, մերկ, սովալլուկ ու հիվանդ երեխաների մեջ էր, որ հայտնվեցին նրանք, և թե ինչ էին անում էդ Որբանոցի մեջն ու շուրջը՝ ամեն տեսնելիս հուզմունքից կուլ էի տալիս արտասունքներս և երբեք, երբեք չեմ մոռանալու ահռելի ապետի մեջ՝ սովի, տիֆի, խոլերայի և ամեն տեսակի ցավի ու տանջանքի դեմ երես-երեսի կռվի դուրս եկած էդ շրջնաց մարտիկներին» (6, էջ 207)։

Կնոջ վիճակը ներկայացնելու համար Հ. Թումանյանը հաճախ դիմում է պատմական կարևոր իրողությունների՝ մասնավորապես թուրք-պարսկական տիրապետության շրջանին, երբ և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի բնակչությունը գտնվում էր ստրկական պայմաններում. «Վրաց Թեյմուրազ թագավորի՝ վկայությամբ միայն Գուրիայի արքեպիսկոպոսը [ստիպված] տարեկան 12 հազար աղջիկ էր ուղարկում Թուրքիա՝ ութանասուն էլ՝ սուլթանին նվեր» (6, էջ 210)։ Թուրքական հրոսակների «ավանդույթ» դարձած առևանգումները մշտական վախի ու սարսափի կնիքն էին դրել հայ աղջկա վրա։ Պատահական չէ, որ Անուշն ասում է մորը.

—Նանի, վախեցի,
Նանի, ներքևում ես մարդիկ տեսա,
Կարծեցի՝ թուրքերն էին լողանում (2, էջ 54)։

Հավատով լցված կանանց ապագայի նկատմամբ, Թումանյանը հույս էր հայտնում, որ կինը կազատագրվի ու կդառնա տղամարդու իրավահավասար ընկերն ու լիիրավ քաղաքացի.

Առատ կլինի կինը արդ,
Կընկնի էգի գինը արդ,
Կբարձրանա նրա տեղ
Ազատ, անկախ կինը՝ մարդ։

Թումանյանի երազանքը դարձել է իրականություն։ Այսօր հայ աղջիկն ու կինը՝ ընտանիքի ու հասարակության լիիրավ ու պատվարժան քաղաքացիները, եռանդով ու ստեղծագործական ավյունով մասնակցում են երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքին։

ОБРАЗ ЖЕНЩИНЫ В ТВОРЧЕСТВЕ ОВАНЕСА ТУМАНЯНА

В. П. ДАРБИНЯН

Резюме

В творчестве великого армянского писателя Ованеса Туманяна значительное место уделено армянской женщине, ее жизни, быту и нравам, ее положению в обществе, семье, ее духовному миру и психологии. Широко и глубоко изучив положение девушки и женщины разного возраста и социального положения, гениальный поэт создал прекрасную галерею живых образов женщины. В статье делается попытка показать глубину женских образов у Туманяна, неустанное стремление автора вызвать у читателей чувство сострадания к прекрасному полу, обладающему огромной трудовой и творческой потенцией, способному к «неистовому самопожертвованию». Отважный борец и глашатай свободы, Туманян с надеждой и неколебимой верой смотрел на эмансипацию женщины, словом и делом служа этому благородному делу.